

փայական միջերը մ'անշուշտ, ինքնագիր գործերու մշակութիւնը, որուն հարստութիւնը կը կազմեն բեմականքը, Կոլոտի դպրոցին գրաւականներն են և Այսբոլորն ապացուցանելու համար միայն Նալեանի՝ Կոլոտի դպրոցին այդ ամէնէն փայլուն ներկայացուցչին, գործերուն ուսումնասիրութիւնը բաւական է: Երանի՛ թէ Նալեանի նկատմամբ մեր ձեռք հասած տեղեկութիւններուն քառորդն ալ ունենայինք իր դասակից եւ կարգակից վարդապետներուն համար, որոնց անունները ցանկած է դպիր Սարգիս Յովհաննէսեան, ժամանակակից քերական վարժապետ մը:¹

“Ամբողջութեամբ զպրատան” վարժապետ՝ Վարդան վարդապետի աշակերտներէն էր Նիկիթ. Յովհաննէս Պատրիարքի ձեռնադրած աշակերտները կարգաւ ասոնք են.

1. Թովմաս վարդապետ²;
2. Երեմիա վարդապետ:
3. Եարութիւն վարդապետ Հէլահոֆի³;
4. Եակոբ վարդապետ Աստուածաբան (= Նալեան):

¹ Այս Ձեռագիրը սիրով յանձնեց ինծի՝ իմ սիրելի եւ գրասէր բարեկամս Տօթ. Վ. Յ. Թորգոմեան:

² Թովմաս եւ Երեմիա վարդապետները ինքն Կոլոտ ալ մասնաւորապէս յիշատակած է Զէնոբ Գլակի յիշատակարանին մէջ. “որք ղեգերին միշտ ի գրունս ընթերցմանց Աստուածաշունչ տառից”:

³ Կոլոտ նոյնպէս կը յիշատակէ մասնաւորաբար Եարութիւն եւ Եակոբ վարդապետները, որոնք, ինչպէս տեսանք, Սկիթի Աստուածաբանութիւնը յանձն առին փոխառփոխ գրեւ “իւրեանց գծապրութեամբ իսկաւ”:

— “Յիշեցիք եւ զամենայն աշակերտեալ որդեակս մեր ի Քրիստոս որք միշտ յուսման ղեգերին. թէ զՎարդապետս եւ թէ որք ղեռ եւս առ նոյն վախճան ձկտին, զի հասանիցին առ այն որոյ վախճանաւ աշխատին” (Յիշատակարան Սկիթի):